Արձանագրություն N 2
«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/139» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի նիստի
Протокол N 2
Заседание комиссии по оценке электронного аукциона с кодом ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/139

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ.1, հ.126 սենյակ),
-օրը՝ 16.09.2025թ.-ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Եղիազարյան, Ա. Հարությունյան, Վ. Ջիհանյան
Լ. Հովհաննիսյան

Участвовали
Председатель комиссии: М. Арутюнян
Члены комисии: А. Егиазарян, А. Арутюнян, В. Джиханян
Секретарь комисии: Л. Оганесян

1. **«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/139» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 12.05.2025թ. հարցադրման և 16.09.2025թ. դրա վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին**
В рамках процедуры закупки с кодом " ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/139" 12.09.2025 г. вопросы и ответы от 16.09.2025 г. о предоставлении разъяснений по этому поводу
(Մ. Հարությունյան Մ. Арутюнян)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/139 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 12.09.2025թ. eauction.armeps.am կայքի միջոցով հարցադրում է տրվել, որին գնահատող հանձնաժողովը տրամադրել է հետևյալ պարզաբանումը.

Հարցադրում 1.

«Մանրամասն ուսումնասիրելով ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ ցանկանում ենք ստանալ մի շարք պարզաբանումներ՝ հստակեցնելու սպասվող աշխատանքների ծավալը, առկա բյուջեի և տարբեր շահագրգիռ կողմերի դերերի համապատասխանությունը: Տեխնիկական բնութագրում նշված է, որ «Պատվիրատուն համաձայն է անհրաժեշտության դեպքում աջակցել հանդիպումների և քննարկումների կազմակերպմանը պետական և համայնքային մարմինների և այլ հաստատությունների հետ»: Խնդրում ենք հստակեցնել՝ • Արդյո՞ք այդ աջակցությունը ներառում է նաև վարչական շրջանների հետ կապերի հաստատում, տարածքների տրամադրման ապահովում, տեխնիկական կահավորում և տեղական մասնակիցների ներգրավման աջակցություն: Բաղադրիչ 2-ի նկարագրության համաձայն՝ հաքաթոնները պետք է կազմակերպվեն 12 վարչական շրջաններում ապակենտրոն տրամաբանությամբ: Խնդրում ենք հստակեցնել. • Արդյո՞ք յուրաքանչյուր վարչական շրջանում նախատեսված է առանձին մրցանակաբաշխություն և հաղթող թիմի ընտրություն, թե՞ բոլոր թիմերը մասնակցելու են միասնական եզրափակիչ մրցանակաբաշխության՝ քաղաքային մակարդակով: • Արդյո՞ք նշված բոլոր բաղադրիչները (գիտություն-քաղաքականություն երկխոսություն, էքսպո, 12 ապակենտրոն հաքաթոն, պարգևատրում, մեդիա լուսաբանում) նախատեսված են ամբողջությամբ իրականացնելու ծառայություն մատուցողի կողմից, թե՞ դրանց որոշ մասեր կիրականացնի հենց Քաղաքապետարանը կամ վարչական շրջանները: • Մենթորների ներգրավման և հոնորարների ծախսերը սպասվո՞ւմ են ամբողջությամբ ծառայություն մատուցողի կողմից: • Արդյո՞ք մրցանակները (մենթորության փաթեթներ, համայնքային ծրագրերում փորձնակություն) տրամադրվելու են Քաղաքապետարանի կողմից, թե՞ նաև ծառայություն մատուցողը պետք է ապահովի: • Մեդիա համագործակցության, ինֆլյուենսերների ներգրավման և գովազդի ծախսերը ներառվա՞ծ են բյուջեի մեջ, թե՞ նախատեսվում է ապահովել Քաղաքապետարանի և ԵԿՆ ԾԻԳ-ի կողմից: • Տեսանյութերի և վիդեո-դոկումենտալ նյութերի արտադրությունը ամբողջությամբ սպասվո՞ւմ է ծառայություն մատուցողից: «Բովանդակային արդյունքներ» բաժնում նշված է, որ միջոցառման արդյունքում պետք է ապահովվի առնվազն 12 նորարարական լուծումների թիմային պրոտոտիպ և առնվազն 5 իրագործելի պիլոտային գաղափար: Խնդրում ենք հստակեցնել. • Արդյո՞ք «պրոտոտիպ» ասելով նկատի է առնվում գաղափարի նախնական մոդել / ներկայացում (օրինակ՝ մաքեթ, նախնական կոնցեպտ, ծրագրի նախագիծ),թե՞ պահանջվում է իրական տեխնիկական լուծում, որն իրագործելի է անմիջապես կիրառման համար: • Արդյո՞ք իրատեսական է սպասել լիարժեք իրագործելի պրոտոտիպերի, հատկապես ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների կողմից»:

Вопрос 1:

Подробно изучив представленные технические задания, мы хотели бы получить ряд разъяснений относительно объема ожидаемых работ, доступного бюджета и соответствия ролей различных заинтересованных сторон. В технических заданиях указано: «Заказчик соглашается оказать поддержку в организации встреч и обсуждений с государственными и общественными органами, а также другими учреждениями, при необходимости». Пожалуйста, уточните: • Включает ли эта поддержка также установление контактов с административными округами, обеспечение помещениями, техническим оборудованием и поддержку вовлечения местных участников? Согласно описанию Компонента 2, хакатоны должны быть организованы в 12 административных округах децентрализованно. Пожалуйста, уточните: • Планируется ли отдельная церемония награждения и выбор команды-победителя для каждого административного округа, или все команды будут участвовать в совместной финальной церемонии награждения на уровне города? • Планируется ли полная реализация всех вышеперечисленных компонентов (диалог между наукой и политикой, выставка, 12 децентрализованных хакатонов, награждение, освещение в СМИ) поставщиком услуг, или некоторые из них будут реализованы самим муниципалитетом или административными округами? • Ожидается ли, что поставщик услуг полностью покроет расходы на привлечение наставников и гонорары? • Будут ли призы (наставнические пакеты, стажировки в общественных программах) предоставлены муниципалитетом, или поставщик услуг также должен будет их предоставить? • Включены ли расходы на сотрудничество со СМИ, привлечение влиятельных лиц и рекламу в бюджет или планируется, что они будут предоставлены муниципалитетом и YERE PIU? • Ожидается ли, что поставщик услуг полностью покроет производство видеороликов и видеодокументальных материалов? В разделе «Результаты контента» указано, что результатом мероприятия должно быть не менее 12 прототипов инновационных решений, созданных командой, и не менее 5 осуществимых пилотных идей. Пожалуйста, уточните: • Означает ли «прототип» начальную модель/презентацию идеи (например, макет, начальную концепцию, план проекта) или для этого требуется реальное техническое решение, которое можно реализовать немедленно? • Реалистично ли ожидать полностью осуществимых прототипов, особенно от студентов и старшеклассников?

Պարզաբանում 1.

1. **Արդյո՞ք այդ աջակցությունը ներառում է նաև վարչական շրջանների հետ կապերի հաստատում, տարածքների տրամադրման ապահովում, տեխնիկական կահավորում և տեղական մասնակիցների ներգրավման աջակցություն:**

Վարչական շրջանների հետ կապի հաստատումը, ինչպես նաև վարչական շրջաններում տարածքների տրամադրումը կիրականացվի Պատվիրատուի կողմից: Ծառայություն մատուցողը պետք է առաջարկություններ ներկայացնի միջոցառման անցկացման ձևաչափի և բովանդակության մասով, որը ենթակա է իրականացման՝ Պատվիրատուի հետ համաձայնեցումից հետո:

Տեխնիկական կահավորումն ու նյութատեխնիկական ապահովումը (տեսաուղիղ հեռարձակումներ, համապատասխան գրենական պիտույքներ) իրականացվելու է ծառայություն մատուցողի կողմից, համաձայն տարածքների տրամադրման և Պատվիրատուի աջակցության պայմանների:

Միջոցառման մասնակիցների ներգրավումը կիրականացվի ծառայություն մատուցողի նախաձեռնությամբ՝ Պատվիրատուի հետ համագործակցությամբ: Ծառայություն մատուցողը, տեխնիկական բնութագրին համապատասխան, պարտավոր է իրականացնել շահագրգիռ կողմերի քարտեզագրում (բուհեր, ինովացիոն և ոլորտային փորձագիտական կենտրոններ, մասնավոր հատված, միջազգային դոնորներ և այլ դերակատարներ) և ներկայացնել համագործակցության առաջարկներ Պատվիրատուին՝ տարբեր հնարավոր տարբերակների դիտարկման նպատակով: Այս գործընթացի շրջանակում ծառայություն մատուցողը պատասխանատու է ներգրավման մեխանիզմների մշակման և գործնական իրագործման համար՝ ապահովելով արդյունավետ մասնակցություն միջոցառման բոլոր բաղադրիչներում:

2. **Բաղադրիչ 2-ի նկարագրության համաձայն՝ հաքաթոնները պետք է կազմակերպվեն 12 վարչական շրջաններում ապակենտրոն տրամաբանությամբ: Խնդրում ենք հստակեցնել.**

- **Արդյո՞ք յուրաքանչյուր վարչական շրջանում նախատեսված է առանձին մրցանակաբաշխություն և հաղթող թիմի ընտրություն, թե՞ բոլոր թիմերը մասնակցելու են միասնական եզրափակիչ մրցանակաբաշխության՝ քաղաքային մակարդակով:**

Բաղադրիչ 2-ի («Ուսանողական հաքաթոն՝ քաղաքային լուծումներ») շրջանակում հաքաթոնները կազմակերպվելու են 12 վարչական շրջաններում՝ խնդիրների շուրջ արդյունավետ լուծումներ մշակելու նպատակով: Միևնույն ժամանակ, բոլոր թիմերը մասնակցելու են միասնական եզրափակիչ մրցանակաբաշխությանը՝ քաղաքային մակարդակով, որը կանցկացվի միջոցառման երկրորդ օրը՝ Ծառայություն մատուցողի կողմից առաջարկված և Պատվիրատուի կողմից հաստատված վայրում:

- Արդյո՞ք նշված բոլոր բաղադրիչները (գիտություն-քաղաքականություն երկխոսություն, էքսպո, 12 ապակենտրոն հաքաթոն, պարգևատրում, մեդիա լուսաբանում) նախատեսված են ամբողջությամբ իրականացնելու ծառայություն մատուցողի կողմից, թե՞ դրանց որոշ մասեր կիրականացնի հենց Քաղաքապետարանը կամ վարչական շրջանները:

Տեխնիկական բնութագրով նշված բոլոր բաղադրիչները՝ գիտություն-քաղաքականություն երկխոսություն և տեխնոլոգիական էքսպո, 12 ապակենտրոն հաքաթոն, ծրագրերի ցուցադրություն և պարգևատրում, ինչպես նաև մեդիա լուսաբանումն ու հաղորդակցությունը, նախատեսված են ամբողջությամբ իրականացվելու ծառայություն մատուցողի կողմից: Միաժամանակ, Պատվիրատուն պատրաստակամ է ապահովել աջակցություն վարչական շրջանների հետ կապերի հաստատման, տարածքների տրամադրման և պետական ու համայնքային մարմինների հետ համագործակցության կազմակերպման մասով, ինչպես նաև պատրաստ է համատեղ աշխատել և աջակցել ծառայություն մատուցողին բոլոր բաղադրիչների իրականացման ընթացքում:

- Մենթորների ներգրավման և հոնորարների ծախսերը սպասվո՞ւմ են ամբողջությամբ ծառայություն մատուցողի կողմից:

Մենթորների ներգրավման և հոնորարների ծախսերը ենթակա են ամբողջությամբ ապահովվելու ծառայություն մատուցողի կողմից: Հնարավոր է նաև դիտարկել որոշ ոլորտներում որպես մենթոր Երևանի քաղաքապետարանի ոլորտային մասնագետների և/կամ գործընկերների (կամավոր հիմունքներով) ներգրավման տարբերակը:

- Արդյո՞ք մրցանակները (մենթորության փաթեթներ, համայնքային ծրագրերում փորձնակություն) տրամադրվելու են Քաղաքապետարանի կողմից, թե՞ նաև ծառայություն մատուցողը պետք է ապահովի:

Մենթորության փաթեթները և համայնքային ծրագրերում փորձնակության հնարավորությունը տրամադրվելու է Պատվիրատուի կողմից:

- Մեդիա համագործակցության, ինֆլյուենսերների ներգրավման և գովազդի ծախսերը ներառվա՞ծ են բյուջեի մեջ, թե՞ նախատեսվում է ապահովել Քաղաքապետարանի և ԵԿՆ ԾԻԳ-ի կողմից:

Մեդիա համագործակցությունն, ինֆլյուենսերների ներգրավումը և գովազդի ծախսերը նախատեսված են իրականացնելու ծառայություն մատուցողի կողմից, համաձայն տրամադրված բյուջեի: Միաժամանակ, Պատվիրատուն պատրաստ է տրամադրել տեղեկատվական և կազմակերպչական աջակցություն՝ անհրաժեշտության դեպքում աջակցելով մեդիա և սոցիալական հարթակներում հաղորդակցման գործընթացում, ինչպես նաև համագործակցելով լրատվամիջոցների հետ:

- Տեսանյութերի և վիդեո-դոկումենտալ նյութերի արտադրությունը ամբողջությամբ սպասվո՞ւմ է ծառայություն մատուցողից:

Տեսանյութերի և վիդեո-դոկումենտալ նյութերի արտադրությունը նախատեսված է ամբողջությամբ իրականացվելու ծառայություն մատուցողի կողմից, համաձայն տեխնիկական բնութագրով սահմանված բովանդակային արդյունքների պահանջների:

3. **«Բովանդակային արդյունքներ» բաժնում նշված է, որ միջոցառման արդյունքում պետք է ապահովվի առնվազն 12 նորարարական լուծումների թիմային պրոտոտիպ և առնվազն 5 իրագործելի պիլոտային գաղափար: Խնդրում ենք հստակեցնել.**

- Արդյո՞ք «պրոտոտիպ» ասելով նկատի է առնվում գաղափարի նախնական մոդել / ներկայացում (օրինակ՝ մաքեթ, նախնական կոնցեպտ, ծրագրի նախագիծ),թե՞ պահանջվում է իրական տեխնիկական լուծում, որն իրագործելի է անմիջապես կիրառման համար:

Պրոտոտիպ հասկացությունը վերաբերում է ծրագրային նախագծին, որը հնարավորություն է տալիս գաղափարը ներկայացնել, փորձարկել և գնահատել դրա կիրառելիությունը քաղաքային խնդիրների լուծման շրջանակում: Ծառայություն մատուցողի պարտականությունն է ապահովել, որ թիմերը ներկայացնեն առնվազն ծրագրային նախագծեր, որոնք կունենան իրականացման հեռանկար և այդ գաղափարները հետագայում զարգացնելու հնարավորություն:

- Արդյո՞ք իրատեսական է սպասել լիարժեք իրագործելի պրոտոտիպերի, հատկապես ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների կողմից:

«Իրագործելի պիլոտային գաղափարների» ցուցանիշը նախատեսված է որպես առաջնային գնահատման միջոց, այն պետք է լինի մտածված, համահունչ քաղաքային խնդիրներին և հնարավորության դեպքում պատրաստ փորձարկման համար: Հաշվի առնելով մասնակիցների տարիքային խմբի և փորձառության տարբերությունները, սպասվող պրոտոտիպերը չեն ենթադրում լիարժեք տեխնիկական լուծում անմիջապես կիրառման համար, այլ ծառայում են որպես հիմք հաջորդ քայլերի համար, ինչպիսիք են մենթորությունը և փորձնական իրագործումը:

Разъяснение 2.

" 1. Включает ли эта поддержка также установление контактов с административными округами, обеспечение помещениями, техническим оборудованием и поддержку привлечения местных участников?

Установление контактов с административными округами, а также предоставление помещений в административных округах осуществляется Заказчиком. Исполнитель должен представить предложения по формату и содержанию мероприятия, которые подлежат реализации после согласования с Заказчиком.

Техническое обеспечение и логистическая поддержка (прямые видеотрансляции, необходимые канцелярские принадлежности) осуществляются Исполнителем в соответствии с условиями предоставления помещения и поддержки Заказчика.

Привлечение участников к мероприятию осуществляется по инициативе Исполнителя совместно с Заказчиком. Исполнитель, в соответствии с техническим заданием, обязан провести картографирование заинтересованных сторон (университеты, инновационные и отраслевые экспертные центры, частный сектор, международные доноры и другие субъекты) и представить Заказчику предложения по сотрудничеству для рассмотрения различных возможных вариантов. В рамках данного процесса Поставщик услуг отвечает за разработку и практическую реализацию механизмов взаимодействия, обеспечивающих эффективное участие во всех компонентах мероприятия.

2. Согласно описанию Компонента 2, хакатоны должны быть организованы в 12 административных районах с децентрализованной логикой. Пожалуйста, уточните:
- Планируется ли отдельная церемония награждения и выбор команды-победителя для каждого административного района, или все команды будут участвовать в совместной финальной церемонии награждения на уровне города.

В рамках Компонента 2 («Студенческий хакатон: Городские решения») хакатоны будут организованы в 12 административных районах с целью разработки эффективных решений проблем. При этом все команды примут участие в совместной финальной церемонии награждения на уровне города, которая состоится во второй день мероприятия в месте, предложенном Поставщиком услуг и утвержденном Заказчиком.

- Все ли вышеперечисленные компоненты (диалог между наукой и политикой, выставка, 12 децентрализованных хакатонов, награды, освещение в СМИ) полностью реализуются Поставщиком услуг, или некоторые из них будут реализованы самим муниципалитетом или административными округами?
Все компоненты, указанные в техническом задании: диалог между наукой и политикой и выставка технологий, 12 децентрализованных хакатонов, демонстрация программы и награждение, а также освещение в СМИ и коммуникация, полностью реализуются Поставщиком услуг. При этом Заказчик готов оказать поддержку в установлении контактов с административными округами, предоставлении территорий и организации взаимодействия с государственными и общественными органами, а также готов сотрудничать и оказывать поддержку Поставщику услуг в ходе реализации всех компонентов.

- Полностью ли покрываются расходы на привлечение менторов и их гонорары поставщиком услуг?
Расходы на привлечение менторов и их гонорары полностью покрываются поставщиком услуг. Также возможно рассмотреть возможность привлечения отраслевых специалистов и/или партнёров мэрии Еревана (на добровольной основе) в качестве наставников в некоторых областях.

– Будут ли призы (наставнические пакеты, стажировки в общественных программах) предоставляться мэрией, или поставщик услуг также должен будет их предоставить?

Будут ли наставнические пакеты и возможности стажировки в общественных программах предоставляться Заказчиком?
– Включены ли в бюджет расходы на сотрудничество со СМИ, привлечение влиятельных лиц и рекламу, или их планируется покрыть мэрией и ГРП Еревана?
Расходы на сотрудничество со СМИ, привлечение влиятельных лиц и рекламу планируется покрыть за счёт поставщика услуг в соответствии с предоставленным бюджетом. При этом Заказчик готов оказывать информационную и организационную поддержку, помогая в процессе коммуникации в СМИ и социальных сетях, а также сотрудничать со СМИ при необходимости.

– Полностью ли ожидается от поставщика услуг производство видеороликов и видеодокументальных материалов?
Производство видеоматериалов и видеодокументов планируется полностью осуществлять силами поставщика услуг в соответствии с требованиями к результатам, определенными в техническом задании.

3. В разделе «Результаты» указано, что по итогам мероприятия должны быть предоставлены не менее 12 командных прототипов инновационных решений и не менее 5 реализуемых пилотных идей. Просьба уточнить.

— Означает ли термин «прототип» предварительную модель/презентацию идеи (например, макет, предварительная концепция, проектный проект) или требуется реальное техническое решение, которое может быть реализовано немедленно?

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 4
Принято решение: за –4, против – 4

Հանձնաժողովի նախագահ **Председатель комиссии**		Մ. Հարությունյան М. Арутюнян
Անդամներ **Члены комиссии**		Ա. Եղիազարյան А. Егиазарян
		Ա. Հարությունյան А. Арутюнян
		Վ. Ջիհանյան В. Джиханян
Քարտուղար՝		Լ. Հովհաննիսյան